

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Երկու քիւ միկ ծրարով
Տարեկան . . 11 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

Ծրանշարն տողը
20 շաբաթ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Redaction du journal

„Iraounk“

VARNA (Boulgarie)

Редация

ѢСТНИКЪ

„Iraounk“

ВАРНА

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

ԳՐԱԽԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ԱՋԳԱՅԻՆ ՔԳՆԱԴՈՒՄԻ ՄԱՆՈՒՊ

Մեր նախորդ յօդուածով, որ կրում էր «Ճակատագրական Բնական» խորագիրը, ներկայացնելով ընդհանուր ազգի կացութիւնը որպէս խիստ վճռական, որպէս խիստ կրիտիկական, խոստացանք մատնանիշ անել այն մի քանի գլխաւոր պայմանները, որոնց իրականացումը առաջին անհրաժեշտութիւն ընդունեցինք ազգային բազմաւնեցիկ, ազգային բարձր իդէալներին ու նպատակներին, որով ստում է, չնչում է և ապրում է ներկայ հայութիւնը, իրականացման համար:

Մենք այդ պայմանները կշռափնէք առ այժմ գրեթէ հարեւանցի. ապագայում մենք կխօսինք նրանց մասին աւելի ընդարձակօրէն, հետզհետէ և ամեն անգամ, երբ առիթը ներկայանայ:

Նախ, և ամենից առաջ, մենք կարծում ենք որ, այժմ աւելի քան ուրիշ ո՛ր և է ժամանակ հայկական պատմական շրջաններում, ամեն տեղ, ամեն կէտի վերայ, ուր, իրերի անխուսափելի բերմունքով, հանգամանքների հարկեցուցիչ դասաւորութեամբ, հպում, շօշափում կամ մօտաւորութիւն տեղի կունենայ հայկական տարրի և այլ ո՛ր և է օտար տարրի միջեւ, որ, այսինքն վերջինս, նպատաւորութեամբ գոյութեան կուռի յաջող պայմաններով և զօրաւոր առաւելութիւններով, ակնյայտի կամք կդնէ և ստանձգութիւններ կանէ մտնելու հայկական մարմնի մէջ, ցտեղու նրա ամբողջութիւնը, իւրացնելու և ոչնչացնելու նրա ազգութիւնը, մենք կարծում ենք, ասում ենք, — և մեր այդ կարծիքի հետ չենք կարծում որ գտնուի որ և է հայ, որ համաձայն չլինի որ Հայութիւնը, ամեն այդպիսի դէպքերում, ամեն ժամանակից աւելի, ինչ պէսնեկայ ծանր րո-

պէսւմ, երբ նա ա՛յնքան տկար մնացած է գոյութեան կուռի առաջնորդում, պէտք ունի ամենաուժեղ, ամենազօրաւոր կերպով դատաւարութեւ, ամբողջութեւ, սեղմութեւ այն սկզբնական, հիմնական զգացումով, որով դատաւարութեւ են, որով ամբողջութեւ են բոլոր ազգերը անխորտիւր նմանօրինակ կացութիւնների մէջ, և որ անուանում է ազգային ոգի:

Ազգային ոգի — ահա՛ ամբարտաւր, որը պէտք է կանգնէ Հայութիւնը, իւր գոյութեան ճգնաժամի մէջ, ամեն այն զրգուռի, ամեն այն բռնադատական և միանգամայն անընդունելի կամեցողութիւնների և ստանձգողութիւնների դէմ, որոնք կը գրուին նրա վերայ, նրա առաջ, եղբ՛ւր է ուսական տարրի, եղբ՛ւր է ուրիշ ո՛ր և է տարրի կողմից:

Այդ միևնույն ազգային ոգին է, որով պէտք է պաշտպանուի Հայութիւնը, որպէս ամբողջութեւ վաճանակ, ինչպէս արտաքին, նոյնպէս և ներքին, սեփական, ազգային քանդող — քայքայող տարրերի դէմ, որոնք, գիտակցաբար թէ անգիտակցաբար, — անշուշտ անգիտակցաբար յենուելով սխալ ըմբռնութեւ, սխալ մեկնութեւ սկզբունքների, վարդապետութիւնների վերայ, անվերածելի, անանցանելի հակասութիւն կընեն ազգային ընդհանուր ոգու և դասակարգային մասնաւոր ոգու միջև և կիշտան նրան՝ տկարացնելով նրա ազգայնապէս մղուած կռիւները ազգային ընդհանուր թշնամիների դէմ:

Մասերի շահերը որքան էլ նուիրական, որքան էլ բարձր նկատուին իրենց համար, նրանք, այնու ամենայնիւ, չեն կարող և չպէտք են առաջնութիւն ստանալ ընդհանուր ազգային շահերի վերայ: Մասերի շահերը կարող են իրականանալ ա՛յնքան և ա՛յն չափով, որքան և որ շափով նրանք չեն կարող որ և է փնտ, որ և է խանդաւում բերել Արեւելոյութեան. նրանք սահմանաւորութեւ և պայմանաւորութեւ են Արեւելոյութեան, այսինքն, Ազգի գերագոյն շահերի շրջանակի մէջ: Ազգերի շարքին մէջ, Ազգը պէտք է անվթար պահպանէ իւր ամբողջութիւնը՝ ընդհա-

նուր յեղաշրջման պրօցէսի մէջ: Իրանից յետոյ, և երկրորդ տեղում, մենք գտնում ենք այն առաջին անհրաժեշտութիւնը, որ կայանում է այն գրական, առողջամիտ և իրողութիւնների վերայ հիմնուած սկզբնական մէջ, որին պէտք է հետեւին Ազգը և մանաւանդ Յեղափոխական հաստատութիւնները, որոնք, այսպէս թէ այնպէս, իրենց վերայ են աւել ինքնապայմանութեան գերագոյն գործը:

Մենք կարծում ենք որ աւելորդ և անզօր են միանգամայն այն բացառանքութիւնները, այն ռազմիկ արտայայտութիւններն ու գուցէ միայն սրտի միտիւարանք եղող առաւել կամ նուազ խոշոր բառերը, ամականները, որոնց գիմում են խնդրելով գրեթէ առանց բացառութեան բոլոր ազգային պաշտպանութեան նըուիրութեւ օրդանները, սկսած ամենաթեթեւներից մինչև ամենաթեթեւ կարծածները, Ամեն ժամանակ, և այժմ քան ուրիշ որ և է ժամանակ, երբ ազգային գոյութիւնը գտնուում է լուրջ ճգնաժամի մէջ, անհրաժեշտ է ունենալ որոշ, գրական ազգային քաղաքականեցիկ, որի գործադրութեան կերպերը կարող են տարբեր լինել և փոխուել համեմատ տեղի, ժամանակի և հանգամանքների, բայց որի սակայն էութիւնը, հոգին պէտք է լինի միևնույն — ազգային ինքնապաշտպանութիւնը:

Երրորդ, վերջապէս, մենք առաջին անհրաժեշտութիւն անհրաժեշտութիւն ենք համարում վերացրել միանգամ ընդ միշտ գոյութիւն ունեցող Յեղափոխական կուսակցութիւնները, վերածելով նրանց մի և միացեալ բնականորէ միակ Յեղափոխական մարմնի, միևնույն նպատակով, միևնույն տա՛րիկայով, այսինքն գործուող նպատակով միևնույն եղանակով: Անմիտ է, անհասկանալի է և միանգամայն հակասական սրանից աւելի երկար յամառել, կենալ, պնդել ամեն գնով պահ-

պանելու կուսակցական շրջանակները, կուսակցական դրօշները, գոյնն ուր, տարբերութիւնները:

Ժամանակ է և պէտք է հասկընալ վերջապէս որ բացարձակ անկարելիութիւն է և բացայայտ ցնարք սպասել, յուսալ որ և է գրական արդիւնք, որ և է շոշափելի լուրջ գործ մի Յեղափոխական հաստատութիւնից, որ, բաժնուած միմեանց դէմ մահու և կենաց կռիւ մղող անթիւ անհամար մեծ ու պզտիկ կոտորների, ջլատում է, քայքայում է, սպանում է իւր սեփական ոյժերը, իւր մտաւոր, բարոյական և ֆիզիքական զօրութիւնը, ուրիշ բանի չի յատկացնելով ժամանակի մեծ մասը, բայց եթէ հնացած և ոչ մի այժմեականութիւն չի ներկայացնող սկզբունքի հարցերի, բիւզանդական սխալաստիկ անմիտ և դատարկ վիճաբանութիւնների, երբ միւս կողմից, անմիջական վերահաս վտանգը իւր բոլոր արհաւիրքներով եկած հասած է մինչև Ազգութեան գուռը. ուրիշ բան չսերմանելով իւր սեփական շարքերի մէջ, բայց եթէ վրէժխնդիր, քինախնդիր առեւտրութիւն, անհրաժեշտութիւն, կուսակցական անհայտ, անվերածելի մոլեռանդ ոգի, այլևս վտանգաւոր եւ վրնասակար դարձած շահախնդիր մրցակցութիւն, հակառակութիւն, թշնամութիւն և . . . մինչև իսկ մահ. իսկ նրա իդէալը եղող, նրա փայտալոյս կուռքը եղող ժողովուրդի, հայ ազգի վերայ ուրիշ բան չթողնելով բայց եթէ յուսահատութիւն, զրուանք եւ անտարբերութիւն . . .

Ժամանակ է և պէտք է հասկընալ վերջապէս որ Ազգային յեղափոխական ոյժերի փոքրիկ շրջանակը, հանդէպ մանաւանդ թշնամու ոյժի անհամեմատ մեծութեան, անհամեմատ ահագնութեան, անկարող է վերցնել տանի կուսակցական բաժանումներ, որ գրանք, այդ կուսակցական բաժանումները, պէտք է վերջապէս վերանան մէջ տեղից տեղի տալով մի և ընդհանուր Ազգային յեղափոխական միացեալ մարմնի:

Մենք կարծում ենք, մենք համոզուած ենք որ կուսակցութիւնները, հասած մանաւանդ այն կացութեան, որի մէջ գլխաւորում են նրանք ներկայումս, բացի շարքից ուրիշ ոչինչ չեն կարող արտադրել այլեւս:

Կոչակցութիւնները պէտք է վերանայն:


Կոչակցութիւնները պէտք է միանան:

Կուսակցութիւնները անհրաժեշտ չեն, ոչ էլ անոնց միանալը անկարելի է:

Ահա գլխաւոր, էական, կենսական պայմաններ, որոնք պէտք է իրականացնեն ներկայ հայ սերունդը՝ պահպանելու համար իր Ազգային գոյութիւնը կեանքի մէջ, դեռ իր նրան այն աղատ, անկախ, ինքնուրոյն և ինքնօրէն պայմաններին մէջ, որոնց հասնելը ընդհանուր հայութեան խնայելն է:

Հմայեալ Խոշորագոյն

ԵՐԱՅԱՆԻ ԹՈՒՐԿԻՅԱՆ ՎԻՃԱԿԸ



... 26 Սեպտ. 1903

Թուրքիոյ համար օրուան հրատապ խնդիրը՝ մակեդոնականն է: Հակառակ թուրքիոյ մամուլին այդ խնդրին մասին ըրած հեղինակաւ տեսութիւններուն, ժողովուրդը միշտ մոտաւորութեան մէջ է եւ չար գուշակութիւններ կընէ՝ հին փորձառութեանց վրայ չափելով:

Մանաւանդ ժամանակէ մը ի վեր, պատերազմի արեւելքը պատած է զիրենք եւ ինչպէս ամեն տեղ, հոս ալ չեն պակսիր բարեպաշտող զաւակներ, որոնք ամեն օր, երեւակայական պատերազմի գոյժը կուտան միամիտ իսլամին, այս դերին լաւագոյն ներկայացուցիչները՝ յայն մամուլն ու յայն ժողովուրդը կարելի է համարել:

Բայց այսօր պատերազմը սկսելու հաւանականութիւնը իրաւ ըլլայ կամ ոչ ու միջոցը մօտ ըլլայ կամ հեռու սա ստոյգ է թէ՛ այսօր Թուրքիան մէկ կողմէն ծովային զօրքերու թիւը աւելցուցած է գլխաւոր նեղուցին վրայ, եւ եօթը մարտանաւեր անշարժօրէն կապան ալդ ջուրերուն մէջ, իսկ միւս կողմէն սկսած է ռէսիֆներ հաւաքել, նոյն իսկ Տարտանիէն, նոյնիսկ կըսեմ որովհետեւ տեսնուած է պարագաներ, որ ուրիշ կողմերէ հաւաքած են ռէսիֆներ ու Տարտանիէն այն ժամանակ միայն հաւաքած են, երբ խնդիրը սուր ու ծանրակշիռ կերպարանք մը առած է:

Շատեր կը զարմանան, թէ ինչպէս այդքան մեծ պատրաստութիւններ կը տեսնեն Թուրքիան՝ իր այդ դատարկ գանձով:

Թուրքիոյ ինչպէս պաշտօնեաները, նոյնպէս եւ կառավարութիւնը, մէկը իր թոշակովը եւ միւսը տուրքերով, մարտերով եւ ուրիշ օրինական գանձումներով չէ որ կապին, կաշառք եւ պարագայական լաւագոյն հարկերը՝ գլխաւոր նեղուցին են իրենց նեղ օրերուն:

Այսօր երբ կառավարութիւնը մէկ կողմէն զօրք կը հաւաքէ իր ցեղակիցներէն, լայնաբեր ալ՝ բացի իրենց սովորական տուրքերէն ու յետեւալ ատ անգամ անիրաւաբար, զանաւոր

տուրքերէն զատ, պատերազմական ծախուց մասնակցելու բացառիկ պարտականութիւններ ունին:

Վերջին Ռուս-Թուրքական պատերազմին ժամանակ աւելի ուստիստեղծ կը հաւաքէին, բայց այս անգամ, ազգ. իշխանութեան լուր տրուած է՝ 800աւան դրուցից քանի մը ձիեր տալ: Չեմ գիտեր, եթէ սկզբնաւորութիւնը ըլլալուն համար այդպէս է ու վերջը կրկին ուստիստեղծի հաւաքումը պիտի ձեռնարկուի:

Բայց այսպէս ըսելով չը կարծուի թէ Թուրքիան իր զօրքերը այդքան կը խորհի, մարդ երբ կը տեսնէ հնոտի հազուադէպով եւ զրկմէ թողնել այդ զօրքերը՝ ցեղային վրէժը գրգռելու տեղ՝ ողորմասիրութիւնը կարծնայ իր մէջ՝ եւ այդ մուրացիկի նմանութիւն ունեցող խեղճներուն քանի մը փարայ տալ կը խորհի: Եւ միթէ իրենք տա՛նք իրենք չեն դիտել այդ բանը: Լաւ գիտեն ու ատոր համար, այսօր երբ զօրահաւաքութեան հրաման ելած է, ամեն մէկը կը թողուն իրենց աշխատութիւնը՝ շարժու կամ ամուսն կիսուն եւ նոյն իսկ ձգելով իրենց քանի մը դահեկան առեւտրեան իրենց յօրպանիւններուն քով, ու թիկեւ զբոսականներով, յոյսիւնք Մուհամմէտի աստուծուն վրայ դրած, կը հեռանան Համիտի ջղաւրդի եւ կառավարող կառավարութեան սահմաններէն, եւ ինչու այդպէս չընեն, եթէ ատոնց մէկը նոյն իսկ ամենաշեղծ սերով մը փարած ըլլար իր հայրենիքին ու ամեն գնով ուղէն անոր անկախութեան զոհուիլ, զարծաւ այս պարագաներուն մէջ զինուորագործել չը պիտի ուզէր:

Յուն-թուրքական պատերազմին վերջաւորութիւնը դեռ ամենուն յիշողութեան մէջ թաւած է: Եթէ մի փաշան յաղթականօրէն մինչեւ Աթէնքի արաբի լեռները հասնելէ վերջ, ոչ միայն իր շահած տեղերը վրայ տուաւ, այլ եւ արգաւանդ կրէտէն: Ու այդ ամենը տեսնելէ վերջ երթալ կամովին էջ-նահատակ ըլլալ, վասն փառաց անմիտ կառավարութեան մը, անշուշտ գովելի գործ մը չէ:


Ներկայ կառավարութեան քաղաքականութիւնէն ոչ միայն ժողովուրդը զոհ չէ, ըլլայ իսլամ կամ ոչ իսլամ, այլ եւ կառավարական պաշտօնեաները, մեծէն սկսեալ մինչեւ ամենէն յետին: Ո՛րք են ան երեւմտի խրոխտ պաշտօնեաները՝ ամենքն ալ իսլոք գաղութներու դարձած են: Ամենուն քով մտաւորանքութիւն մը կը տիրէ վաղուան անարգութեան վրայ, նահանգապետ մինչեւ յետին զինուորէն կը կասկածի:

Վաղուան թուրքական յառաջդիմութիւն յուսալ, յիմարութիւն է պարագայէս: Ամբողջ ժողովուրդը բռնակալութեան տակ կը հեծէ անխտիր, վարանոտ, կասկածոտ եւ ստրուկ սեւրուք մըն է որ ծիլ կուտայ, ինչ բարեք կարելի է յուսալ այդ սերունդէն:

Թուրքիոյ միակ երանելիները՝ լըրտեսներն են, որոնք «Համիտի անձնապահ զօրք» պատուանդանը վայելելով ամեն իրաւունք եւ առաւելութիւն ունին:

Մարդիկ միշտ սովորութիւն ունին իրենց դարուն անկան մը տալ եւ զայն Ոսկեղար կամ Երկաթի դար եւ այլն կը կոչեն: Իրենց ունեցած յաջողութեան կամ անյաջողութեան համեմատ: Կիմա, երբ Թուրքերը այս դարուն անկան մը տալ եւ զին Լճը-Տեմնեմի Դ.Ս.Ր պիտի ըսեն ապահովաբար, այդքան ընդարձակ է ատոնց ոյժը եւ հեղինակաւոր իրենց ձայնը:

ԱՐԵՆԻՆԻՅԻ



ՀՈԳԵՀԱՆԳԻՍԾ ԵՒ ՍԳԱՀԱՆԴԵՍ

Ի յիշատակ Թուրքիոյ եւ Կովկասի Հայ նահապետներուն

Քանի մը անձեր մտադրած ըլլալով Կովկասի նահապետներուն համար հոգեհանգիստ եւ սղանդոց կառարել, խժաղկութիւնս աւելի պատշաճ աւասալ այդ տեղեր հանդէսին միացնել 96ին Թուրքիոյ մէջ ջարդուած հազարաւոր նահապետներուն յիշատակն ալ եւ գրաւորապէս առաջարկեց Սղանդոցի Յանձնախումբին: Գոհ ենք որ Յանձնախումբը խիստ բանաւոր դատած է մեր առաջարկութիւնը եւ ըստ այնմ զրկած է մեզ հետեւեալ յայտարարութիւնը:

Յանձնախումբի անդամներն են:

- Տ. Հմայեալ Խոշորագոյն
- Տ. Յարութիւն Ժանկիւրեան
- Տ. Նիկողոս Կէսսամեան
- Տ. Յովսէփ Բարսեղեան
- Տ. Փիլիպոս Հալաճեան
- Տ. Մարգարտունի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի Հոկտ. 26ին պիտի կատարուի եկեղեցական կալուածներու դրաման առթիւ ինկած Ռուսական նահապետներու եւ 96 թիւին կոտորածներուն մէջ ինկած Տաճկահայ նահապետներուն յիշատակ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍԾ ԵՒ ՍԳԱՀԱՆԴԵՍ

Հոգեհանգիստը պիտի կատարուի տեղւոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ տամբ ճիշդ 9ին, որմէ յետոյ պիտի մկնուի Սահեթիկեան քահանայ, որ պիտի կատարուի Սղանդոցի:

Պիտի ստենախօսեն Պ. Պ. Խոշորագոյն եւ Մարգարտունի: Ատենախօսութիւնը տգատ է, բայց խօսել փափաքողներ Յ. օր ատաջ պարտին լուր տալ Յանձնախումբին անդամներէն Պ. Պ. Ժանկիւրեանի եւ Մարգարտունիի: Յանձնախումբը կը հրաւիրէ Վառնայի Հայ երկօհո հասարակութիւնը ներկայ գտնուիլ եւ պատուել նահապետներուն յիշատակը:

ՅԱՆՁՆԱՅՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸՆ ԱԼ

Անցեալ շաբաթ օրուան մեր խմբագրականով դատապարտած էինք Աւետիս Նազարեթեանի վրայ կատարուած սպանութեան փորձը, անոր հեղինակները ո՛ր խումբի եւ ո՛ր կուսակցութեան որ ալ պատկանին: Այդ լուրը առաջին անգամ տուող Ռուս-չուքի Վերաշնորիւնի խնայել խմբագիրները՝ որոնք ողբացեալ Միսոյի եւ Զիթեանի սպանութիւնները խրախճանք տեսնելու լրբութիւնը ունեցան եւ համարձակեցան պահ մը այդ պաշտելի նահապետները վերակազմեալներու զօր ցոյց տալ, այս անգամ այդ համարձակութիւնն ալ չեն ունեցած, չըսին ու կրեաւայ թէ երբէք չպիտի կրնան ըսել թէ Նազարեթեանի վրայ կատարուած սպանութեան փորձին մէջ վերակազմեալ Հնչակեանութեան մասը կայ:

Եւ որովհետեւ հաւաստի աղբիւրներէ իմացած էինք թէ՛ քանի մը շաբաթէ ի վեր Լոնտոն գումարուած Հին Հնչակեան պատգամաւորական ժողովին մէջ վէճեր եւ անհամաձայնութիւններ ծագած են, կատար յայտնեցինք թէ՛ «մի գուցէ Նազարեթեան սպաննելու փորձը Հինչակ կողմէ եղած ըլլայ»:

Ահա այսօր մեր այդ կասկածը նոր սպանութեամբ մը կուգայ աւելի ուժ ստանալ: Տեսէք ինչ կրէ պուլկար հեռագր. գործակալութիւնը:

Լոնտոն 14 հոկտ.

Լոնտոնի հայկական գաղարկաւորական նախագահը՝ Սարգիս Սագունիկն սպաննուեցաւ առջի գիշեր: Մարդասպանը փախած է: Կը կարծուի որ սպանուեալ շարժառիթը Լոնտոն բնակող Հայոց մէջ գոյոթիւն ունեցող վէճ մըն է:

Լաւատեղեակ աղբիւրներէ արդէն իմացած ենք թէ վերակազմեալներու Լոնտոնի կեդրոնը այդ քաղաքէն մեկնած է, հետեւաբար այս սպանութեան պատճառ ցոյց տրուած վէճը կը կարծենք թէ այժմ Լոնտոն զբոսնող Հին Հնչակ. Պատգամաւորներուն մէջ եղած ըլլայ:

Առնուած տեղեկութեանց վրայ հաւանական թուող նկատարութիւններ ընելու եւ կարծիքներ յայտնելու մեր իրաւունքը ոչ ոք մեզմէ կարող է կապտել: Այս նկատարութեանց եւ կարծիքներու տեղի չէր մնար միայն այն ատեն, երբ Վերաշնորիւնի խնայել խմբագիրները իրենց ստացած «Լրկին հեռագիրները»-ն ու թիւամբ հրատարակէին եւ ոճաղործները սրոյ կերպով ցոյց տային. բայց անոնք փոխանակ այդ ընելու, փոխանակ ժողովրդեան արդէն զբոսած մտքերը լուսարանելու, ելած են աւելի մթութեան, աւելի անհասկացողութեան մասին: Կատարութիւնը իրենց սա յիմար տողներով:

«Այդ հրէշային արարքի ստորագրող «հեղինակները հասարակաց անողոք «գաղափարներն յանձնելով՝ եւայն»:

Որո՞նք են այդ հեղինակները, զորս հասարակաց անողոք գաղափարներն կը յանձնեն. ժողովուրդը որո՞ւ գէ՞մ աւողոք գաղափարներն ընէ: Եթէ գիտեն ինչո՞ւ չեն ըսել եւ ինչո՞ւ չեն ապացուցաներ: Հասարակութիւնը որո՞ւ գէ՞մ կուտի, զո՞վ պատժէ: Ի՞նչ այդ նեղամիտ տողերով կուղեն որ ժողովուրդը զիրար խողխողէ:

Այդ տողերը միամիտ ամբոխը մուկին մէջ զիրար սպաննելու զրգելէ զատ եւրիշ իմաստ չեն տար: Բայց ալ չենք կարծել որ Միսոյի եւ Զիթեանի արեւմտի կարողացած վերաշնորիւն պատանքին գրգռներուն կարեւորութիւն տուող միամտներ գտնուին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պուրկազ, 13 Հոկտ.

Պուրկազի Սեւ. ընտրութեան համար Վառնայէ բուսական ստորագրութեամբ (*) Պատրի-

(*) Ոչ թէ բաւական ստորագրութեամբ, այլ ամբողջ Վառնայի ընտրողներուն երեք չորրորդի ստորագրութիւններով:

ԴԻՏ. ԽՄԲ.

